ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. 511703.

ՎԴ - _ Ե__

«**17**» **հուլիսի 2019թ.**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ՊԱՐՈՆ ՌՈՒԲԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ներսիսյան,

Թիվ ԵԴ/19587/02/18 քաղաքացիական գործով Ձեր կողմից 2019 թվականի հուլիսի 4-ին կայացված՝ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին որոշման կապակցությամբ տեղեկացնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Գործի հանձնումը մեկ դատարանից մեկ այլ դատարան» վերտառությամբ 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել սույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Ընդդատության և

ենթակայության մասին վեճերը» վերտառությամբ 26-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական դատարանի կողմից վերահասցեագրված գործի նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Քաղաքացիական գործերի ենթակայությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (այսուհետ՝ վարչական դատարան) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի:

«Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ

իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերը նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական դատավարության կարգով գործի քննության ընթացքում տարածքային ընդդատության կանոնի խախտում հայտնաբերելու դեպքում դատարանը գործն ուղարկում է ըստ տարածքային ընդդատության՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության այն դատարան, որին տվյալ գործն ընդդատյա է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդդատության կանոններով:

Եթե գործի քննության ընթացքում պարզվում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում առկա գործը «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի հիմքով ենթակա է քննության ՀՀ սնանկության դատարանում, ապա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով տվյալ գործը հանձնում է սնանկության դատարանին՝ **ըստ ենթակայության**:

Գործն ըստ ընդդատության (ոչ թե ըստ ենթակայության) ուղարկած և այն ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև **տարածքային ընդդատության շուրջ** ծագած վեճերի լուծման լիազորությունն վերապահված է Վճռաբեկ դատարանի նախագահին:

Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների շրջանակում է նաև ՀՀ վարչական դատարանից առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրված գործերի **ենթակայության** վերաբերյալ վեճերի լուծումը, որն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված՝ ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման համար նախատեսված կարգով:

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված՝ ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման գործընթացում Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունները հանգում են հետևյալին.

Վճռաբեկ դատարանի նախագահը լուծում է՝

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով

գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև քաղաքացիական գործերով ***տարածքային ընդդատության*** վերաբերյալ վեճերը,

- ՀՀ վարչական դատարանից քաղաքացիական գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրված դատական գործերի ***ենթակայության*** վերաբերյալ վեճերը:

Նշվածը փաստում է այն մասին, որ տարածքային ընդդատության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի լուծմանը ենթակա են միայն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև տարածքային ընդդատության շուրջ ծագած վեճերը:

Ինչ վերաբերում է դատական գործերի ենթակայության շուրջ ծագած վեճերին, ապա հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների շրջանակն այդ առումով սահմանափակված է ՀՀ վարչական դատարանից առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրված գործերով ծագած վեճերի լուծմամբ:

Վճռաբեկ դաւրարանի նախագահի կողմից ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծման վերաբերյալ առկա իրավակարգավորումները փաստում են նաև այն մասին, որ այլ դատարանների, այդ թվում՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության և սնանկության դատարանների միջև գործերի ենթակայության շուրջ հնարավոր վեճերի լուծումը դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների շրջանակից:

Դրանից բացի, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի նախագահին ընդդատության և ենթակայության մասին վեճերով դիմելիս՝ անհրաժեշտ է խստագույնս պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերը, որոնք հանգում են հետևյալին.

1. առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատության կամ ՀՀ վարչական դատարանից վերահասցեագրման կարգով ստացված գործի ենթակայության հետ, ***առանց գործը վարույթ ընդունելու***, յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, կամ

2. անհամաձայնություն չհայտնելով ըստ տարածքային ընդդատության կամ ՀՀ

վարչական դատարանից վերահասցեագրման կարգով ստացված գործի ընդդատության կամ ենթակայության վերաբերյալ, ***յոթնօրյա ժամկետում*** որոշում է կայացնում գործը վարույթ ընդունելու մասին:

Մինչդեռ, սույն քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանից ստացվելուց հետո Ձեր կողմից 20.05.2019թ. կայացված որոշմամբ այն ընդունվել է վարույթ և նշանակվել նախնական դատական նիստ, որից հետո 04.07.2019թ. նոր միայն որոշում է կայացվել դիմելու Վճռաբեկ դատարանի նախագահին:

Սույն քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանը, ղեկավարվելով «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի կանոններով, 19.03.2019թ. որոշում է կայացրել թիվ ԵԴ/19587/02/18 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին:

Սնանկության դատարանի **(դատավոր՝ Լ. Կատվալյան)** 05.04.2019թ. որոշմամբ հիշյալ քաղաքացիական գործը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանն այն պատճառաբանությամբ, որ քաղաքացիաիրավական վեճը չի առնչվում սնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքին և իրավունքներին, իսկ միայն պարտապանի քաղաքացիական գործով պատասխանող հանդիսանալու հանգամանքը բավարար չէ վերը նշված քաղաքացիական գործը թիվ ԵԱԴԴ/0037/04/13 սնանկության գործի շրջանակներում քննելու համար:

Քաղաքացիական գործը 17.05.2019թ. հանձնվել է դատավոր Ռ. Ներսիսյանին:

Դատարանի 20.05.2019թ. որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նախնական դատական նիստը նշանակվել է 04.07.2019թ:

04.07.2019թ. նշանակված նախնական դատական նիստում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով, դատարանը որոշում է կայացրել թիվ ԵԴ/19587/02/18 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին հանձնելու վերաբերյալ:

Դատարանը գործի ենթակայության վերաբերյալ իր անհամաձայնությունը հիմնավորել է «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի կարգավորման համատեքստում:

«Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր վարույթում գտնվող գործը հանձնում է ՀՀ սնանկության դատարանի քննությանը ոչ թե տարածքային ընդդատության կանոնները խախտված լինելու, այլ՝ գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը ենթակա լինելու (առարկայական ենթակայության) հիմքով:

Սույն դեպքով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելը չի վերաբերում գործի տարածքային ընդդատության հարցին, այլ, ըստ էության, Դատարանը համաձայն չէ քաղաքացիական գործի ենթակայության հետ:

Նշված հիմքով դատական գործի ենթակայության վերաբերյալ վեճի լուծումը, վերը նշված հիմնավորումների հաշվառմամբ, դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների շրջանակից:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները՝ տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցերի քննարկումը և լուծումը դուրս է Վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակից, որպիսի պարագայում և բացակայում է բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից համապատասխան որոշում կայացնելու օրենսդրական հիմքը:

Առդիր՝ վերադարձվում է թիվ ԵԴ/19587/02/18 քաղաքացիական գործը՝ բաղկացած 7 հատորից (1-ին հատորը՝ 107 թերթ, 2-րդ հատորը՝ 101 թերթ, 3-րդ հատորը՝ 121 թերթ, 4-րդ հատորը՝ 160 թերթ, 5-րդ հատորը՝ 149 թերթ, 6-րդ հատորը՝ 110 թերթ, 7-րդ հատորը՝ 115 թերթ):

Հարգանքով՝

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ